ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-226[1]-21.03.2013-ՊԻ-010/2

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 38.1-րդ կետով.

«38.1. Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման որակավորման քննությունների համար	բազային տուրքի երեսնապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1		3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	Հաշվի առնելով օրենքի ընդունման և ուժի մեջ մտնելու գործընթացը՝ անհրաժեշտ է առավել մանրամասնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» եզրափակիչ և անցումային դրույթներով նախատեսված կարգավորումները:	Ընդունվել է:	**Հոդված 10-ը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Եզրափակիչ և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետով, 3-րդ հոդվածով լրացվող 115.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 115.2-րդ հոդվածի 6-րդ մասով, 7-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ից: 2. Մինչև սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 115.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժի մեջ մտնելը որակավորման գրավոր քննությունները անցկացվում են միայն 115.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված եղանակով:»:
		Ընդունվել է:	

	115.3-րդ հոդվածի 15-րդ և 19-րդ կետից կարելի է հանել «(բացառությամբ համակարգչային եղանակով թեստավորման)» բառերը, քանի որ պարզ չէ, թե այդ դեպքում ինչպիսի կարգավորում է գործում: 115.3-րդ հոդվածի 30-րդ կետը հանել, քանի որ կրկնվում է՝ « 30. Հավակնորդը իրավունք ունի բողոքարկման հանձնաժողովից ստանալ լրացուցիչ բանավոր պարզաբանում հանաձնաժողովի որոշման վերաբերյալ:»	Ընդունվել է:	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյան	Անհրաժեշտ է հստակեցնել 115.2 –րդ հոդվածով նախատեսված թեստավորման ընացակարգերը այնպես, որ ապահովվի թեստավորման գործընթացի օբյեկտիվությունը, արդյունավետությունը և մեխանիկական հիշողությամբ դրանք մտապահելու հնարավորությունը:	Ընդունվել է:	115.2-րդ հոդվածում ավելացվել են նոր 3-րդ և -րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ. «3.Սույն հոդվածի 1-ի մասի 1)-ին կետով նախատեսված թեստի ժամանակ հարցերը ընտրվում են պատահականության սկզբունքով: Թեստի անցկացման համար նախատեսված հարցերի ընդհանուր քանակը, որի միջից կատարվում է հարցերի ընտրությունը, պետք է առնվազն կրկնակի անգամ գերազանցի մեկ թեստի համար նախատեսված հարցերի քանակը: ... 6. Արդարադատության խորհուրդը սահմանում է սույն հոդվածի 1-ի մասի 1)-ին կետով նախատեսված թեստի անցկացման համար մշակման ենթակա հարցերի նվազագույն քանակը և դրանց հրապարակման կարգը, եթե Արդարադատության խորհրդի որոշմամբ դրանք ենթակա են հրապարակման:»: